ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 13.11.2023թ. հ.031 գրության՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքով: Համաձայն վերը նշված օրենսգրքի՝ ընդերքօգտագործման թույլտվությունը տրամադրում է ընդերքի օգտագործման բնագավառում լիազոր մարմինը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, որի լիազորությունները սահմանված են «Ընդերքի մասին» օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասով: Ընդերքօգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի լիազոր մարմինը ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է, որի լիազորությունները սահմանված են «Ընդերքի մասին» օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով: Երևանում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքի, 01.10.2023թ. դրությամբ տրամադրված է 18 ընդերքօգտագործման իրավունք: 18 հանքավայրերից 1-ը ստորգետնյա է (Ավանի աղի կոմբինատ), 17-ը՝ բացահանք:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ